ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ
ԽԱՉԱՏՈՒՐ ԱՆԴՐԵԱՍՅԱՆԻ ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ՈՒՂԵՐՁԸ
ԳԻՏԵԼԻՔԻ ԵՎ ԴՊՐՈՒԹՅԱՆ ՕՐՎԱ ԱՌԹԻՎ

Սիրելի՛ աշակերտներ, ուսանողներ, սաներ, հարգելի՛ մանկավարժներ, կրթության ոլորտի ներկայացուցիչներ և ծնողներ,

Ի սրտե շնորհավորում եմ բոլորիդ նոր ուսումնական տարվա մեկնարկի և Գիտելիքի օրվա առիթով: Այս տոնը խորհրդանշում է ոչ միայն գիտելիքի ու դպրության սկիզբը, այլև հայրենիքի նկատմամբ սերն ու պատասխանատու քաղաքացի դառնալու կարևոր արժեքների պահպանությունը:

Օրը հատկապես տոնական է առաջին դասարանցիների և բարձրագույն ուսումնական հաստատություններ մուտք գործող առաջին կուրսեցիների համար: Առանձնակի ջերմությամբ ուզում եմ շնորհավորել նրանց. ձեր առաջին քայլերն ուսումնական ուղի՝ դպրության դռները բացելու պահին, կոչված են նոր շունչ տալու և ամրապնդելու համամարդկային արժեքները: Թող ուսումնառության ողջ ընթացքը ձեզ համար լինի աշխարհաճանաչման ու ինքնադրսևորման ժամանակաշրջան, լի նոր գիտելիքներով ու ձեռքբերումներով:

Նոր ուսումնական տարվա մեկնարկի առթիվ շնորհավորանքներ եմ հղում Մեղրի համայնքի նախադպրոցական, հանրակրթական, միջին մասնագիտական և արտադպրոցական կրթության ոլորտի բոլոր ուսումնական հաստատությունների մանկավարժներին, աշակերտներին, ուսանողներին և սաներին: Լիահույս եմ, որ համատեղ ջանքերով մեր համայնքի բոլոր կրթօջախներում կստեղծվի ժամանակի պահանջներին համապատասխան ուսումնական միջավայր և կկրթվեն բարեկիրթ, հայրենասեր ու աշխատասեր սերունդներ:

Սիրելի՛ ուսուցիչներ, ձեր առաքելությունը անփոխարինելի է: Դուք սերունդներ եք կերտում, ոգեշնչում ու ուղղորդում երեխաներին դեպի ինքնազարգացում և պատասխանատվություն: Շնորհակալություն եմ հայտնում ձեր նվիրվածության, համբերության և պրոֆեսիոնալիզմի համար:

Հարգելի՛ ծնողներ, ձեր աջակցությունն ու հոգատարությունը անգնահատելի է: Միասին մենք ստեղծում ենք այն կրթական միջավայրը, որտեղ յուրաքանչյուր երեխա կարող է բացահայտել իր ներուժը և դառնալ հայրենասեր, աշխատասեր ու բարձր արժեքներ ունեցող քաղաքացի:

Լիահույս եմ, որ 2025-2026 ուսումնական տարեշրջանը կբերի նոր ձեռքբերումներ, գիտելիքի սեր և անխափան ուսումնական գործընթաց մեր համայնքի բոլոր կրթօջախներում:

Շնորհավոր Գիտելիքի և դպրության օր: